ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
09-ը մարտի, 2020թ., N09

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 09.03.2020Թ. ԹԻՎ 03 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ 09.03.2020թ. թիվ 03 նիստի օրակարգը՝
1. Հայանիստ համայնքի 2020թ. վարչական բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին:
2. Հայանիստ համայնքի ավագանու՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների մասին:
3. Հայանիստ համայնքի ավագանու՝ 2019թ. նոյեմբերի 27-ի թիվ 27 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

09.03.2020թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09-ը մարտի, 2020թ., N10-Ն

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից՝ ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայանիստ համայնքի 2020 թ. վարչական և ֆոնդային բյուջեի փոփոխությունները.

1.Վարչական բյուջեի փոփոխությունները.

1.1.1 Վարչական ապարատի պահպանում

1) 4267 հոդվածին ավելացնել 100,0 (մեկ հարյուր հազար) դրամ և պլանը հաստատել 300.0 (երեք հարյուր հազար) դրամ:

10,7,1 1 սոցիալապես անապահով անձանց աջակցություն:

4726 հոդվածին ավելացնել 100,0 (մեկ հարյուր հազար) դրամ և պլանը հաստատել 2100.0 (երկու միլիոն հարյուր հազար) դրամ:

11.1.2 Պահուստային ֆոնդ:

4891 հոդվածից պակասեցնել 200,0 (երկու հարյուր հազար) դրամ՝ և պլանը 2 975447 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր քառասունյոթ հազար) դրամ:

2. Ֆոնդային բյուջեի փոփոխություն.

1) 4.3.2 Նավթամթերք և բնական գազ.

5112 հոդվածից պակասեցնել 1000.0 (մեկ միլիոն դրամ) և պլանը հաստատել 4000.0 (չորս միլիոն դրամ):

2) 4.5.1 Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում.

5112 հոդվածից պակասեցնել 1000,0 (մեկ միլիոն դրամ) և պլանը հաստատել 5457.7 (հինգ միլիոն չորս հարյուր հիսունյոթհազար յոթ հարյուր դրամ) :

3) 6.4,1 Արտաքին լուսավորություն.

5112 հոդվածին ավելացնել 1500.0 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ և պլանը հաստատել 5500.0 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:

5134 հոդվածին ավելացնել 500.0 (հինգ հարյուր հազար) դրամ:

Ավագանու անդամներ՝

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳԻՍՅԱՆ

09.03.2020թ.

գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09-ը մարտի, 2020թ., N11

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով՝ ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Մարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

09.03.2020թ.
գ. Հայանիստ

Հավելված՝
Հայանիստ համայնքի ավագանու
2020թ. մարտի 9-ի թիվ 11 որոշման

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ

1.Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման համար սահմանվում են հետևյալ չափորոշիչները՝

1)համայնքի սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչին կամ ընտանիքին՝ մինչև 100.000 (հարյուր հազար) դրամ,

2)Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը մինչև 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամ,

3)արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած բնակչին (ընտանիքին)՝ մինչև 50.000 (հիսուն հազար) դրամ,

4)արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամին՝ մինչև 100.000 (հարյուր հազար) դրամ,

5)արցախյան պատերազմի 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամին՝ մինչև 50.000 (հիսուն հազար),

6)1941-1945թթ.-ի Հայրենական Մեծ պատերազմի մասնակցին՝ մինչև 50.000 (հիսուն հազար) դրամ,

7)զոհված (մահացած) ազատամարտիկի, այդ թվում՝ մարտական գործողությունների և (կամ) հերթափոխի ընթացքում զոհված զինծառայողի ընտանիքին՝ մինչև 200.000 (երկու հարյուր հազար) դրամ,

8)սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքի անդամի և (կամ) հարազատ չունեցող բնակչի հուղարկավորության համար՝ մինչև 50.000 (հիսուն հազար) դրամ:

2. Մինչև 50.000-ը, սոցիալական օգնության հատկացումը թույլատրել համայնքի ղեկավարին՝ համաձայն համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի:

3.Կամավոր լիազորությունների իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացվում են յուրաքանչյուր տարվա համար՝ ըստ տվյալ տարվա բյուջեի հիմքում դրված ծրագրերի:

4.Նույն անձին կամ ընտանիքին օրացուցային տարվա ընթացքում կարող է տրամադրվել մեկից ավել անգամ սոցիալական օգնության:

5.Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա):

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
09-ը մարտի, 2020թ., N12

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 27 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 33-րդ հոդվածի պահանջներով՝ ՝ ***ավագանին որոշում է՝***

1.Հայանիստ համայնքի ավագանու՝ 2019թ. նոյեմբերի 27-ի՝ «Հայանիստ համայնքի ղեկավարի՝ 2020թ. վարձատրության չափը որոշելու և Հայանիստի համայնքապետարանի աշխատակազմի և Մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2020թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 27 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:
1)Որոշման 2-րդ կետի հավելված 2-ի՝
ա) 2-րդ տողի՝ հաստիքային միավորը սյունակում՝ «1» թիվը՝ փոխարինել «1.12» թվով.
բ) 3-րդ տողի՝ հաստիքային միավորը սյունակում՝ «1» թիվը՝ փոխարինել «1.12» թվով.
գ) 10-րդ տողի՝ հաստիքի անվանումը սյունակում՝ հանել «գիշերային» բառը.
դ) 11-րդ տողի՝ հաստիքային միավորը սյունակում՝ «1» թիվը՝ փոխարինել «0.75» թվով:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

09.03.2020թ.
գ. Հայանիստ